ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

17.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/127

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ա/Ձ) կողմից 20.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ն 20.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն 2018թ. դեկտեմբերի 2-ին հայտարարել է «Մոնթե Մելքոնյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար Կենցային և հանրային սննդի ծառայությունների մատուցման Նպատակով հայտարարված ՄՄԱՌՎ – ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթ: Պատվիրատուն հայտերի բացման օր է սահմանել 2018թ. դեկտեմբերի 18, ժամը 10:00-ն:

Հրավերի ՄԱՍ 1 4.3 կետով պատվիրատուի կողմից պահանջվել է.

Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում որակավորումը հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը.

4) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

5) հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե բանկային երաշխքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ.

Հրավերի ՄԱՍ 1.7.1 կետով պատվիրատուի կողմից պահանջվել է.

Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Նաև armeps.am համակարգում է կցված եղել սյունակ, որտեղ մասնակիցը պետք է ներկայացնի՝ կցի ֆայլը, Հայտի ապահովումը բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Հակոբ Առաքելյան Ռազմիկի ԱՁ-ն ցանկացել է մասնակցել վերոհիշյալ ծածկագրով ընթացակարգին, սակայն ուսումնասիրելով հրավերի ՄԱՍ 1-ի 4.3 և 7.1 կետերը, որտեղ պարզ գրված է, որ մասնակիցը հրավերով պետք է ներկայացնի հայտի ապահովում բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, չի կարողացել մասնակցել ՄՄԱՌՎ – ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթին, քանի որ մենք տվյալ պահին չենք ունեցել բավարար ֆինանսական միջոցներ հայտի ապահովման համար:

Այնուհետև՝ 18.12.2018թ. Ժամը 10:00-ին տեղի է ունեցել հայտերի բացումը և armeps.am համակարգի միջոցով պարզվել է, որ վերոհիշյալ ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, որում կցել է գնային առաջարկ 198.000.000 ՀՀ դրամի չափով, տուժանքի մասին համաձայնագիր և վճարման պահանջագիր՝ 9.900.000 ՀՀ դրամի չափով, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտում է, քանի որ հայտի մասնակցության համար այլևս տուժանքի մասին համաձայնագիր և վճարման պահանջագիր չի ներկայացվում:

Ի զարմանս, պատվիրատուն 19.12.2018թ. gnumner.am կայքում ներկայացրել է արձանագրություն թիվ 2 առ 19.12.2018թ. Ժամը 10:00-ն, որտեղ անօրինական ձևով ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ին, ընկերության կողմից ներկայացված հայտը համարել է բավարար գնահատված և պահանջել է սահմանված կարգով ներկայացնել որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Այնինչ պետք է մերժեր «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Այդ պատճառով գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կոպիտ սխալ է թույլ տրվել:

Գտնում ենք, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ կետը, համաձայն որի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Հանձնաժողովի կողմից խախտվել են Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ի և ուրիշ հնարավոր մասնակիցների իրավունքները, որոնք կմասնակցեին ընթացակարգին եթե իմանային, որ հայտի ապահովումը բանկային երաշխիքի տեսքվ կամ բանկային փոխանցման տեսքով կարելի է չներկայացնել, կամ ընդհանրապես հայտի ապահովում չներկայացնել:

Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Չեղյալ համարել ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 19.12.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները՝ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով որոշումը:

2. Չեղյալ համարել ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթը և հայտարարել նոր օրինական մրցույթ, որպեսզի ուրիշ կազմակրպությունները նույնպես հնարավորություն ունենան մասնակցելու նոր ընթացակարգին:»:

Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ա/Ձ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. «Մոնթե Մելքոյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Մոնթե Մելքոյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ի կողմից 20.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 28.12.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում ԳԲԽ-ԷՍ-2018/127 ծածկագրով բողոքը՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար անհրաժեշտ սննդի պատրաստման ծառայության ձեռքբերման նպատակով, ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Մրցույթ) արդյունքում 19.12.2018թ-ին արձանագրություն № 2 ընտրված մասնակցի «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումը չեղյալ համարելու և Մրցույթը չեղյալ համարելու մասին որոշման վերաբերյալ:

Բողոքաբերի կողմից 20.12.2018թ. ներկայացված բողոքը առ այն, որ ՄՄԱՌՎ – ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի Պատվիրատուն պահանջել է Հրավերի Մաս I 4.3 կետով հայտի ապահովման ներկայացում հակասում է նույն մասում կատարվող նշմանը, որտեղ հստակ գրված է «Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք

ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա հայտի ապահովում չի ներկայացվում»:

Նույն իմաստով նաև նշում կա արված Հրավերի I մասի 7-րդ գլխում, մասնավորապես նշված է «Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա հայտի ապահովում չի ներկայացվում»:

Այս մասով Մրցույթը հրապարակվել է 02.12.2018թ. Մրցույթի Պարզաբանումների ժամկետ սահմանվել է 02.12.2018թ. մինչև 13.12.2018թ. և մասնակիցը չի օգտվել իր իրավունքից, մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի և Հրավերի 3-րդ գլխում «ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ»-ի իրավունքից:

Վերոշարադրյալից հստակ պարզ է դառնում, որ Հակոբ Առաքելյան Ռազմիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը ամբողջությամբ անհիմն է, հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմանը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշմանը և ենթակա է մերժման:

Ցանկանում ենք տեղեկացնել, որ 20.12.2018թ. ժամը 18:47-ին տեղեկագրում հրապարակված բողոքը Պատվիրատուին է հասել 28.12.2018թ. և բողոք չլինելու պատճառով Պատվիրատուն ՄՄԱՌՎ-ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ արդեն կնքել է նախնական պայմանագիր՝ կայքում հրապարակված չէ միայն կնքված պայմանագրի մասին հայտարարությունը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Մոնթե Մելքոյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամի կողմից լիազորված ներկայացուցիչ Սոնա Նավասարդյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/127 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ի կողմից 20.12.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Մոնթե Մելքոյանի անվան

ռազամարզական վարժարան» հիմնադրամի կողմից 28.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.12.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից մրցույթին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

«Մոնթե Մելքոյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ մրցույթ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 19.12.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով որոշել է մրցույթի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ին:

Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ն 20.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվել է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի հայտի ապահովում՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ա/Ձ-ն պարզելով, որ պետք է ներկայացվի հայտի ապահովում բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, չի կարողացել մասնակցել հայտարարված մրցույթին, քանի որ տվյալ պահին չի ունեցել բավարար ֆինանսական միջոցներ հայտի ապահովման համար: Այնուհետև armeps.am համակարգի միջոցով Ա/Ձ-ն տեղեկացել է, որ մրցույթին հայտ է ներկայացրել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, մինչդեռ ըստ բողոքաբերի Պատվիրատուն «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հայտը պետք է մերժեր, այն հիմքով, որ մասնակիցը հայտի ապահովում՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով չի ներկայացրել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ հայտարարված ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ինչը իրենից ենթադրում է, որ մրցույթին հայտի ապահովում չի ներկայացվում: Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց, որ Հրավերում հստակ նշում կա արված առ այն, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ նաև՝ Օրենք)

• 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Նույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Մոնթե Մելքոյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված է, որ գնման գործընթացը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 4-րդ և 7-րդ գլուխներում նշումներ մասում սահմանված է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը

կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Մոնթե Մելքոյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

- ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն:

- «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովում չի ներկայացվել:

- ՄՄԱՌՎ–ՀԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

- Մրցույթի հրավերով սահմանված է, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հակոբ Ռազմիկի Առաքելյան Ա/Ձ-ի կողմից 20.12.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**